ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրումը փոխներգործուն հնարների կիրառման ճանապարհով

Կատարող՝ Մ. Գորգիսյանի անվան հ. 158 հիմն. դպրոցի ուսուցիչ

Ա. Զաքարյան

Ղեկավար՝ Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ջ. Հ. Գյուլամիրյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն.....3

Գլուխ 1 Ձևաբանական գիտելիքների տեղն ու դերը տարրական դպրոցի առարկայական չափորոշչում, ծրագրում և դասագրքերում..... 5

Գլուխ 2 Փոխներգործուն հնարների կիրառումը որպես ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրման արդյունավետ միջոց.....8

2.1. Ուսուցման փոխներգործուն հնարների ընդհանուր բնութագիրը.....8

2.2.Փոխներգործուն հնարների կիրառման հնարավորությունները ԽԻԿ համակարգով մայրենիի դասերի ընթացքում.....10

2.3. Ուսումնասիրման արդյունքների վերլուծություն և ընդհանրացում.....20

Եզրակացություն.....24

Օգտագործված գրականության ցանկ.....25

Ներածություն

Հայտնի է, որ սովորողների կրթության և դաստիարակության առաջին քայլերն իրականացվում են 1-4-րդ դասարաններում:

Մայրենիի կրթական չափորոշչի համաձայն՝ այս տարիների ընթացքում, կրտսեր դպրոցականները պետք է ձեռք բերեն լեզվական գիտելիքների որոշակի մակարդակ: Դրանց շարքին են դասվում հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, որոնք պետք է զարգանան և ձևավորվեն մայրենիի դասաժամերի ընթացքում:

Կարևորելով աշակերտների մտավոր, ստեղծագործական և հաղորդակցական կարողությունների դերը կրթության կազմակերպման ընթացքում՝ մեծ տեղ է տրվում ձևաբանական գիտելիքների ձեռքբերմանը:

Թեմայի արդիականությունը: Ըստ մայրենիի չափորոշչային պահանջների և առարկայական ծրագրի՝ ձևաբանական գիտելիքների ձեռքբերումը պարտադիր է և աշակերտների լեզվամտածողության ու հաղորդակցական կարողությունների զարգացման հիմքն է: Այսօրվա կրտսեր դպրոցականները գերակտիվ են, ունեն ճանաչողական հետաքրքրությունների լայն շրջանակ և դրանց բավարարման բազմազան միջոցներ: Այս հանգամանքը թելադրում է մայրենիի գիտելիքների ձեռքբերման գործընթացի հետաքրքրաշարժության ապահովում: Հենց սրանով էլ պայմանավորված է հետազոտական աշխատանքի արդիականությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքը կատարելիս մեր առջև նպատակ ենք դրել ուսումնասիրել փոխներգործուն մեթոդների բազմազանությունը և դրանց կիրառությունը ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրության գործընթացում: Ինչպես նաև, պարզել, թե ինչ չափով են ընտրված մեթոդները, հնարները նպաստում ձևաբանական տարրական գիտելիքների յուրացման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և մշակել մեթոդական երաշխավորություններ:

Առաջադիր խնդիրները.

1. ուսումնասիրել լեզվաբանական և մեթոդական գրականություն և դրանցում առկա ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրության եղանակներն ու միջոցները:
2. Ուսումնասիրել 1-4-րդ դասարանների չափորոշչում, ծրագրում և դասագրքերում ձևաբանական գիտելիքների սահմանները:
3. Դիտարկել ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման հաջորդայնությունը տարրական դասարաններում:
4. Բացահայտել, մշակել և փորձարկել ձևաբանական գիտելիքների ուսումասիրման գործընթացում կիրառելի փոխներգործուն մեթոդական հնարներ, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանը:
5. Փորձարարությամբ հիմնավորել ձևաբանական տարրական գիտելիքների ձեռքբերման արդյունավետությունը փոխներգործուն մեթոդական հնարենի կիրառման ճանապարհով:

Թեմայի ուսումնասիրման ընթացքում կիրառել ենք հետևյալ **մեթոդները՝**

1. մասնագիտական գրականության և կրթական փաստաթղթերի ուսումնասիրում,
2. դասալսումներ 2-3-րդ դասարաններում և դրանց քննարկումներ,
3. հարցազրույցներ տարրական դասարանների ուսուցիչների հետ,
4. մեր կողմից առաջադրված փոխներգործուն մեթոդական հնարների համալիր փորձարկում և արդյունքների վերլուծություն:

Ուսումնասիրության առարկան: Մայրենիի դասի ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում փոխներգործուն մեթոդական հնարների կիրառման ապահովումն է:

Ուսումնասիրության օբյեկտը: Տարրական դասարաններում իրականացվող մայրենիի դասագործընթացն է՝ ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրման բաղադրիչով:

Փորձարարական բազան: Հետազոտության արդյունքների փորձաքննությունն ու ներդնումն իրականացվել է Մ. Գորգիսյանի անվան հ. 158 հիմն. դպրոցի տարրական դասարաններում:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇՉՈՒՄ, ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ

Ձևաբանության ուսումնասիրումը մշտապես եղել է հայ լեզվաբանների ուշադրության կենտրոնում: Նրանք հեղինակել են ձևաբանական գրքեր և ներկայացրել իրենց տեսակետները:

Ինչպես նշել է Ս. Աբրահամյանը՝ «ձևաբանությունն ուսումնասիրում է խոսքի մասերը, նրա քերականական հատկանիշները՝ ձևային և իմաստային առումով»[1]:

Հայերենի խոսքի մասերն ավանդաբար ուսուցանվում են հետևյալ հաջորդականությամբ՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, եղանակավորող բառեր, վերաբերական, իսկ տարրական դասարաններում ամբողջապես չեն ուսումնասիրվում.ուսումնասիրվում են՝ գոյական, բայ, ածական, թվական, դերանուն, շաղկապ (ընդհանուր ծանոթություն), ձայնարկություն (ընդհանուր ծանոթություն) հերթականությամբ[2]:

Պարզելու համար, թե տարրական դասարաններում ինչպես է ուսումնասիրվում և ինչպիսի տեղ ու դեր է հատկացված ձևաբանական գիտելիքների ուսումնասիրմանն ու աշակերտների կողմից դրանց իմացությանը, ուսումնասիրեցինք մայրենիի գործող առարկայական չափորոշիչը և 1-4-րդ դասարանների առարկայական ծրագիրը:

Արդյունքում պարզ դարձավ, որ տարրական դասարաններում մայրենի լեզվի քերականական գիտելիքների ուսումնասիրությանը շատ կարևոր տեղ է հատկացվում, քանի որ քերականական գիտելիքների յուրացումը նպաստում է աշակերտների բառապաշարի հարստացմանը, գրագետ բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանը, ինչպես նաև աշակերտների ճանաչողական կարողությունների և լեզվամտածողության զարգացմանը:

Քերականության մի մասն են կազմում նաև ձևաբանական գիտելիքները, որոնք ևս ուսումնասիրվում են տարրական դասարաններում՝ մայրենիի դասաժամերին:

---

[1] Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969, էջ 3-4:

[2] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա: Եր., «Զանգակ» հրատ., 2015, էջ 228:

Տարրական դպրոցի մայրենի լեզվի առարկայական չափորոշչում, ըստ երեք մակարդակների, նշվում է, թե տարրական դպրոցն ավարտողը ձևաբանական տարրական ինչ գիտելիքներ պետք է ունենա, որը ներկայացվում է հետևյալ աղյուսակի տեսքով[3].

Աղյուսակ 1.

Առաջին մակարդակ	Երկրորդ մակարդակ	Երրորդ մակարդակ
1. Գոյական 2. Բայ 3. Ածական+գոյական կառույցով բառակապակցություններ	1. Ածական 2. Թվական 3.Թվական+գոյական կառուցվածքով բառակապակցություններ	1. Առարկայի և գործողության հատկանիշ ցույց տվող բառեր: 2. Գործողության հատկանիշ ցույց տվող բառ+բայ կառուցվածքով բառակապակցություններ

Յուրաքանչյուր մակարդակը ներկայացնում է այն գիտելիքների, կարողությունների և հմտությունների չափը, որը պետք է աշակերտները ձեռք բերեն ուսուցման ընթացքում: Առաջին մակարդակը այն բավարարի շեմն է, որը բոլոր աշակերտները պետք է ունենան և կարող են փոխադրվել հաջորդ դասարան, իսկ երկրորդ և երրորդ մակարդակները վկայում են աշակերտների ավելի բարձր առաջադիմության ու գիտելիքներ ունենալու մասին:

Առարկայական չափորոշչից հասկանում ենք, որ ձևաբանական գիտելիքների ուսումնասիրությունը իրականացվում է աստիճանաբար և յուրաքանչյուր դասարանում անցած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները հիմք են հանդիսանում նոր գիտելիքների յուրացման համար:

Առարկայական չափորոշչում նշված այս կետերից հասկանում ենք, որ չորրորդ դասարանն ավարտողը պետք է կարողանա տարբերել և իր խոսքում կիրառել բազմաթիվ բառեր և բառակապակցություններ, որոնք պետք է իմաստային առումով հասկանա և կարողանա դրանք դասակարգել ըստ խոսքի մասերի պատկանելիության:

[3] Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական չափորոշիչ (1-9-րդ դասարան):

Մայրենիի առարկայական չափորոշչի հիման վրա ստեղծվել են առարկայական ծրագրերը՝ յուրաքանչյուր դասարանի համար, որտեղ նշվում է, թե աշակերտներն ինչ գիտելիքներ պետք է ձեռք բերեն ամբողջ այդ ուսումնական տարվա ընթացքում:

Տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքներն ուսումնասիրվում են երկու փուլով՝ *ձևաբանական նախագիտելիքների ուսումնասիրություն* և *ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրություն*:

Ձևաբանական նախագիտելիքներին աշակերտներն ծանոթանում են առաջին դասարանից սկսած և աստիճանաբար սկսում են անվանել խոսքի մասերը և դրանք կիրառել իրենց խոսքում:

1-2-րդ դասարաններում տրվում են **ձևաբանական նախագիտելիքներ**, այսինքն աշակերտներին գիտելիքներ են հաղորդվում առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի մասին, առանց դրանք անվանելու:

3-4-րդ դասարաններում տրվում են **ձևաբանական տարրական գիտելիքներ**, հիմնականում ուսուցանվում են գոյականը, բայը, ածականը, թվականը, իսկ մյուս խոսքի մասերի՝ դերանուն, շաղկապ, մակբայ, ձայնարկություն. միայն տրվում են ընդհանուր տեղեկություններ:

Ուսումնասիրելով 1-4-րդ դասարանների մայրենիի առարկայական ծրագրերը, չափորոշիչը և գործող դասագրքերը աղյուսակի տեսքով ներկայացնենք տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրության հերթականությունը[4]:

Աղյուսակ 2.

Առաջին դասարան	Երկրորդ դասարան	Երրորդ դասարան	Չորրորդ դասարան
1. Ցուցադրված առարկայական նկարների մեջ որոշել առարկաների նմանություններն ու տարբերությունները: 2. Անվանել առարկայական	1. Ծանոթացում առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերին և դրանց առաջադրվող հարցերին: 2. Անձ և իր ցույց տվող	1. Գոյական անուն (գործնական ծանոթացում) - Անձ և իր ցույց տվող գոյականներին: - Հոգնակի թիվը	1. Անցածի կրկնություն. Առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառեր (գոյական, բայ, ածական)

[4] Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր (1-9-րդ դասարան):

նկարները: 3. Բառապաշարի հարստացում իմաստային տարբեր խմբերի բառերով: 4. Բառերի իմաստները ընկալելու և խոսքում դրանք ճիշտ գործածելու կարողությունների ձևավորում: 5. Նկար բառեր, նկար նախադասություններ, տարբեր առարկաների բնութագրում: 6. Հատուկ և հասարակ անուներ, դրանց ուղղագրությունը:	բառեր: 3. Հատուկ և հասարակ անուններ, դրանց գործածությունը: 4. Օժանդակ բայի ուղղագրություն: 5. Գործնական ծանոթացում տարբեր նախադասությունների առարկա, գործողություն, առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի միջոցով:	(կազմելու ձևերին և դրանց ուղղագրությանը) գոյականի ձևափոխություններին (առանց հոլովները մատնանշելու և անվանելու) 2. Բայ: Գործնական ծանոթություն. - բայի դեմքի, թվի, ժամանակի հասկացություններին, - օժանդակ բայի ժխտական ձևերին: 3. Ածական անուն Ածականի գործածությունը նախադասության մեջ:	2. Գոյականի և բայի ձևային փոփոխությունները խոսքում (առանց հոլովում և խոնարհում տերմինները գործածելու): 3. Թվական անուն: Առարկայի թիվ և թվային կարգ ցույց թվող բառեր (թվականներ) 4. Թվականների ուղղագրություն:

Ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման այս հերթականությունը (գոյական, բայ, ածական, թվական) պատահական չէ. խոսքի մասերն ուսումնասիրվում են խոսքում՝ ըստ դրանց գործածության առաջնային կիրառության:

Այսինքն, ըստ գործող ծրագրերի, առաջին և երկրորդ դասարաններում աշակերտները ծանոթանում են առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերի հետ, սովորում են դրանք ըստ հարցերի տարբերակել միմյանցից և բառային խմբեր ձևավորել: Արդեն երրորդ դասարանում սկսում են առանձին ուսումնասիրել գոյական, բայ և ածական խոսքի մասերը, իսկ չորրորդ դասարանում նախ կրկնում են մինչ այդ սովորած խոսքի մասերը, ապա ծանոթանում իրենց համար նոր խոսքի մասի՝ թվականի հետ: Սովորողները նոր գիտելիքներ են ձեռք բերում՝ ընթացքում անընդհատ կրկնելով իրենց անցածը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՀՆԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

2.1. Ուսուցման փոխներգործուն մեթոդական հնարների ընդհանուր բնութագիրը

Տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրությունն իրականացվում է հաշվի առնելով ուսուցման մատչելիության սկզբունքը՝ պարզից դեպի բարդը, և քանի որ այդ գիտելիքների յուրացումն և ուսումնասիրությունը շատ բարդ և երկարատև գործընթաց է, ուստի անհրաժեշտ է խոսքի մասերի ուսումնասիրությունն իրականացնել ավելի պատկերավոր և դասերի ընթացքում կիրառել տարաբնույթ մեթոդական հնարներ, մեթոդներ, դիդակտիկական ուսուցողական խաղեր՝ գիտելիքների ձեռքբերումն աշակերտների համար ավելի մատչելի և հետաքրքրաշարժ դարձնելու նպատակով:

Ինչպես նշում է Մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանը, լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվում է վերլուծական-համադրական մեթոդով, համաձայն որի՝ լեզվական տարբեր գիտելիքների ուսումնասիրման ժամանակ վերլուծվում են լեզվի մեջ գոյություն ունեցող բազմաբնույթ երևույթները, բացահայտվում են բառի, նրա կազմության, կրած փոփոխությունների օրինաչափությունները, նախադասության մեջ և խոսքում ունեցած դերը, ապա ամփոփում և ամբողջացնում են կատարված դիտարկումները[5]:

Մայրենիի դասաժամերին ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ կարող ենք կիրառել ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից, նորագույն ինտերակտիվ մեթոդներ: Վերջիններս ապահովում են ուսուցման և ուսումնառության աշակերտակենտրոն մոտեցումը, համաձայն որի յուրաքանչյուր սովորող պետք է դառնա դասի գործուն մասնակից: Այս մեթոդները լայն հնարավորություն են ընձեռում սովորողին պասիվ վիճակից անցնելու ինքնուրույն և խմբերով համատեղ աշխատանքներ կատարողի, գիտելիքների ձեռբերելու գործընթացի գործուն

[5] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա: Եր., «Զանգակ» հրատ., 2015, էջ 217:

մասնակցի վիճակին: Աշակերտները դասերի ընթացքում նյութը յուրացնում են ոչ միայն լսելով, դիտելով, մտապահելով, անգիր վերարտադրելով, այլև՝ մասնակցելով, մտածելով, հաղորդակցվելով, հարցնելով և ինքնուրույն մտքեր արտահայտելով:

Ինտերակտիվ (անգլ. inter՝փոխադարձ, act՝գործողություն) նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել ինչ-որ մեկի հետ: Այն հիմնված է խմբի անդամների փոխազդեցության և ուսումնական խնդիրների լուծման ընթացքում սովորողի ազատության վրա[6]:

Փոխներգործուն մեթոդական հնարների կիրառման ժամանակ կարևորվում է այն, որ աշակերտներին չեն տրվում պատրաստի գիտելիքներ, այլ այդ գիտելիքները նրանք յուրացնում են դասերի ժամանակ սեփական փորձի, սխալների և ձեռքբերումների հիման վրա՝ գործնական աշխատանքներ կատարելու ընթացքում:

Ներկայումս փոխներգործուն մեթոդական հնարները ակտիվորեն կիրառվում են հենց տարրական դպրոցում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ տարրական դպրոցի հիմնական նպատակը, ոչ միայն սովորողին գիտելիքներ հաղորդելն է, այլև անձի ընդհանուր զարգացումը, նրա մեջ հոգեկան գործընթացների, անձնական կարևորագույն որակների, մտածողության եղանակների, հաղորդակցական և համագործակցայուն կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Փոխներգործուն հնարներ կիրառելիս ուսուցիչը հանդես է գալիս միջնորդի, կազմակերպողի, ուսուցանողի դերում: Նա պետք է միջնորդ հանդիսանա երեխայի և ուսուցանվող նյութի միջև, ուշադիր հետևի սովորողին և անհրաժեշտ պահին օգնի նրան, դասարանում ստեղծի բարենպաստ միջավայր: Ուսուցման գործընթացում՝ դասի տարբեր փուլերում, հաճախակի կիրառվում են փոխներգործուն մեթոդներ և հնարներ, որոնք դասերը դարձնում են ավելի հետաքրքիր աշակերտների համար: Ուսուցման գործընթացում կարող են կիրառվել մի շարք փոխներգործուն մեթոդներ ու հնարներ («Խմբային նախագծեր», «Դերային խաղ», «Ուսումնական խաղեր», «Բանավեճ», «Խճանկար 1», Խճանկար 2», «Ձնագնդի», «Մտագրոհ», «Շրջագայություն

[6] Լ. Ալեքսանյան և ուրիշներ, Ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների տեսությունն ու պրակտիկան: Եր., Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն, 2004, էջ 26:

պատկերասրահում», «Վենի դիագրամ», «Т-աձև աղյուսակ», «Խմբային հետազոտություն», «Պրիզմա»):

Ուսուցման փոխներգործուն մեթոդները շատ բազմազան են և կարելի է կիրառել մայրենիի դասերի կազմակերպման տարբեր փուլերում, սակայն պետք է անշուշտ հաշվի առնել, թե որքանով է ընտրված մեթոդն արդյունավետ օրվա նյութն աշակերտներին հաղորդելու համար:

2.2. Փոխներգործուն հնարների կիրառման հնարավորությունները ԽԻԿ համակարգով մայրենիի դասերի ընթացքում

Տարրական դասարաններում՝ մայրենի լեզվի դասաժամերին, ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրությունը կարելի է իրականացնել փոխներգործուն մեթոդական հնարների կիրառման ճանապարհով, որը հնարավորություն կտա աշակերտներին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և ակտիվ գործունեության ընթացքում յուրացնել ձևաբանական տարրական գիտելիքների այն ծավալը, որը նախատեսված է իրենց համար՝ հիմք ընդունելով աշակերտների տարիքային առանձնահատկությունները:

Հետազոտության ընթացքում՝ մայրենիի դասաժամերին, դիտումներ անցկացնելով տարբեր դասարաններում, ինչպես նաև զրուցելով տարբեր դասվարների հետ, փորձեցինք պարզել, թե տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին որ հնարների ու մեթոդների կիրառմամբ են իրականացվում ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրությունը: Դիտումների արդյունքում համոզվեցինք, որ լեզվական գիտելիքների ուսումնասիրությունը իրականացվում է օրվա դասի թեմայի հետ կապելով՝ բնագրի շուրջ աշխատանք կատարելու ժամանակ:

Հետազոտական աշխատանքի նպատակն էր. պարզել, թե տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին ձևաբանական տարրական գիտելիքներն ուսումնասիրելիս ինչպիսի փոխներգործուն հնարներ են կիրառվում, հասկանալ, թե՛ որքանով է արդյունավետ փոխներգործուն հնարների կիրառությունը լեզվական

գիտելիքների ուսումնասիրության ժամանակ, ինչպես նաև անձնական օրինակով (մայրենիի դասեր պլանավորելով և անցկացնելով) ստուգել, թե՛ որքանով է արդյունավետ փոխներգործուն հնարների կիրառմամբ ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրությունը:

Հետազոտության ընթացքում մեր կողմից պլանավորած և դիտարկված մայրենիի դասաժամերին, ձևաբանական նախագիտելիքների ուսումնասիրման նպատակով փորձեցինք կիրառել մի քանի մեթոդական հնարներ, ուսումնական խաղեր և պարզել, թե որքան արդյունավետ են դրանց կիրառմամբ ձևաբանական նախագիտելքների ուսումնասիության կազմակերպումը:

Ինչպես արդեն գիտենք, մինչև 2-րդ դասարանում աշակերտները ձեռք են բերում ձևաբանական նախագիտելիքներ: Ձևաբանական նախագիտելիք է համարվում նաև հատկանիշ ցույց տվող բառերի ուսումնասիրությունը, որը 2-րդ դասարանում իրականացվում է «**Ճուտիկը**» ստեղծագործության ուսումասիրման ժամանակ:

Հետազոտական աշխատանքի պլանավորել և իրականացրել ենք այս ստեղծագործության ուսումնասիրումը: Դասի առաջնային նպատակներից մեկը սովորողներին հատկանիշ ցույց տվող բառերին ծանոթացնելն էր: Լեզվական նյութի շուրջ աշխատանքը կատարվեց հետևյալ եղանակով.

Դասի *խթանման փուլում* կիրառեցինք «**Մտագրոհ**» **մեթոդական հնարը**՝ աշակերտներին նախապատրատելով լեզվական նյութի յուրացմանը և ուսումնասիրությանը:

Հանձնարարություն: Բնութագրե՛ք ճուտիկին. ինչպիսի՞ն է նա:

Այս մեթոդական հնարի կիրառումը հնարավորություն տվեց աշակերտներին ազատ արտահայտել իրենց մտքերն ու գաղափարները և բնութագրել ճուտիկին՝ թվարկելով համապատասխան հատկանիշներ: Մեթոդական հնարը նպաստեց նաև աշակերտների բառապաշարի հարստացմանը՝ տարբեր հատկանիշ ցույց տվող բառերով:

Այնուհետև բնագրի շուրջ աշխատանք կատարելուց հետո՝ *կշռադատման փուլում* կիրառեցինք «**Վենի դիագրամը»,** որը շատ արդյունավետ է նյութի ամփոփման և ընդհանրացման ժամանակ:

Աշակերտներին բաժանեցինք հատկանիշ ցույց տվող բառեր և տրվեց հանձնարարություն. դրանք դասավորել «Վենի դիագրամ»-ի համապատասխան սյունակում. *ո՞ր հատկանիշներն են բնորոշ ճուտիկին, որո՞նք աքլորին, և որո՞նք են բնորոշ նրանցից երկուսին էլ:* Աշխատանքը կատարելուց հետո աշակերտներին բացատրվեց, որ այդ բառերը հատկանիշ ցույց տվող բառերն են, որոնք պատասխանում են **ինչպիսի՞** հարցին:

Այս մեթոդական հնարը կիրառելով՝ սովորողները կարողացան միմյանց հակադրել երկու կերպարները, գտան դրանց ընդհանուր և անհատական հատկանիշները, ինչպես նաև ծանոթացան հատկանիշ ցույց տվող բառերին:

Փոխներգործուն մեթոդական հնարների թվին կարող ենք դասել նաև **ուսումնական խաղերը,** որոնք բազմիցս կիրառվում են մայրենի լեզվի դասաժամերին՝ այս կամ այն կրթական խնդիրների լուծման նպատակով: Կան մի շարք ուսումնական խաղեր, որոնք նախատեսված են հենց ձևաբանական գիտելիքների ուսումնասիրության համար: Դրանցից են. «Ես ասեմ, դու լրացրո՛ւ», «Գտի՛ր քո խումբը», «Զբաղեցրու քո աթոռը», «Ինչպիսի՞ն է առարկան», «Ո՞ր ծառից են ընկել տերևները», «Բերքահավաք», «Գտի՛ր վերջավորությունը» և այլն[7]:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը, որոնք կիրառել ենք դասերի ընթացքում:

Երկրորդ դասարանում «**Երեք աղջիկների հեքիաթը**» **(հանելուկ, դարձվածք)** հեքիաթի ուսումնասիրման ժամանակ աշակերտները նաև ծանոթանում են առարկա ցույց տվող բառերին և դրանց առաջադրվող հարցերին, որոնց որոշ չափով արդեն ծանոթ են առաջին դասարանից:

Առարկա ցույց տվող բառերի ուսումնասիրման ժամանակ դասի *իմաստավորման փուլում* կիրառեցինք «**Գտի՛ր քո խումբը**» ուսումնական խաղը: Աշակերտներին բաժանվեցին առարկա ցույց տվող բառերի նկարներ, նրանք լսելով «Գտի՛ր քո

[7] Ա. Բալայան, 200 խաղ, Եր.: «Զանգակ» հրատ., 2017, էջ 23-29:

խումբը» հրահանգը, պետք է զբաղեցնեին գրատախտակի մոտ նախատեսված իրենց ճիշտ տեղը՝ ո՞վ (ովքե՞ր) / ի՞նչ (ինչե՞ր): Խաղի ավարտին աշակերտներին բացատրվեց, որ ո՞վ(ովքե՞ր), ի՞նչ (ինչե՞ր) հարցերին պատասխանող բառերը առարկա ցույց տվող բառերն են, և աշակերտները, վերլուծելով խաղի բովանդակությունը, եկան այն եզրահանգման, որ ո՞վ (ովքե՞ր) հարցերին պատասխանող բառերը ցույց են տալիս *անձ*, իսկ ի՞նչ (ինչե՞ր) հարցերին պատասխանող բառերը՝ *իր*:

Այս խաղի կիրառումը աշակերտներին հնարավորություն ընձեռեց իրենց համար հետաքրքիր, ակտիվ գործունեության ընթացքում ձեռք բերել նոր գիտելիքներ և ունակություններ: Խաղին ակտիվությամբ մասնակցում էին դասարանի բոլոր աշակերտները:

«**Երեք աղջիկների հեքիաթը**» **(խնդուկ-խնդմնդուկ)** հեքիաթի 6-րդ հատվածի ուսումնասիրության ժամանակ դասի կարևորագույն խնդրիներից մեկը **հատուկ և հասարակ անուններին** ծանոթացումն էր, ինչպես նաև դրանց ճիշտ գրություն ուսումնասիրումը: Հատուկ և հասարակ անուններին աշակերտները ծանոթ են դեռևս գրաճանաչության շրջանում՝ «Այբբենարանի» նյութերը ընթերցելիս:

Հատուկ և հասարակ անունների ուսումնասիրումը երկրորդ դասարանում կատարեցինք հետևյալ եղանակով. «**Մեծատառ-փոքրատառ**» ուսումնական խաղը կիրառեցինք *դասի իմաստավորման փուլում*, աշակերտներին բաժանվեցին քարտեր, որոնց վրա գրված էին հատուկ և հասարակ անուններ, նրանք իրենց մոտ գտնվող քարտերը պետք է դասավորեին կամ փակցնեին գրատախտակին գծված աղյուսակի համապատասխան սյունակում (մարդիկ, կենդանիներ, ծաղիկներ, քաղաքներ, լճեր, լեռներ, մրգեր):

Առաջադրանքը կատարելուց հետո աշակերտներին առաջարկվեց համեմատել սյունակներում գրված բառերի գրությունները և գտնել դրանց տարբերությունը. աշակերտները եկան այն եզրահանգման, որ *մարդկանց, լեռներին, լճերին, քաղաքներին տրվող առանձին անունները գրվում են մեծատառով*, իսկ *ծաղիկների, կենադիների, մրգերի անունները գրվում են փոքրատառով*: Այնուհետև նրանց բացատրվում է, որ **միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր**

անունը հասարակ անուն է և կոչվում է *ընդհանրացնող անուն,* իսկ **միևնույն տեսակի առարկաներից մեկին տրվող առանձին անունը կոչվում է** *հատուկ անուն*[8]:

Երկրորդ դասարանում **«Ճուտիկը»** ստեղծագործության ուսումնասիրման ժամանակ՝ *իմաստավորման փուլում,* կիրառեցինք **«Ինչպիսի՞ն է առարկան»** ուսումնական խաղը, որի նպատակն էր ընդլայնել սովորողների գիտելիքները հատկանիշ ցույց տվող բառերի մասին, ինչպես նաև հարստացնել նրանց բառապաշարը: Դասարանը բաժանեցինք խմբերի և յուրաքանչյուր խմբին տրվեց բնագրի հերոսների նկարներ (ճուտիկ, աքլոր, կատու, գորտ) և մի ծրար, որի մեջ գրված էին տարբեր հատկանիշ ցույց տվող բառեր: Աշակերտները պետք է ընտրեին յուրաքանչյուր հերոսին բնորոշ հատկանիշները և դրանցով կազմեին բառակապակցություններ, օրինակ՝ կռկռան գորտ, դեղին ճուտիկ և այլն:

Այսպիսով, երկրորդ դասարանում, կիրառելով մեթոդական հնարներ, ուսումնական խաղեր, եկանք այն եզրակացության, որ դրանց կիրառումը շատ արդյունավետ է ձևաբանական նախագիտելիքների ուսումնասիրման ժամանակ:

Այնուհետև մեր հետազոտությունը շարունակեցինք **երրորդ «ա» դասարանում**: Պլանավորեցինք և անցկացրինք մայրենի լեզվի դասեր, որոնց ժամանակ ուսումնասիրվելու էին ձևաբանական տարրական գիտելիքները: Դասերը պլանավորելիս՝ ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ փորձեցինք կիրառել փոխներգործուն մեթոդական հնարներ:

«Երեք հարուստ» ստեղծագործության ուսումնասիրման ժամանակ՝ *անձ* և *իր* ցույց տվող գոյականների մասին աշակերտների գիտելիքներն ամրապնդելու նպատակով կիրառեցինք **«Խմբային հետազոտություն»** փոխներգործուն մեթոդը: **«Խմբային հետազոտություն»** մեթոդի կիրառման ժամանակ ուսուցիչը ներկայացնում է թեման և ցույց տալիս նյութի նախնական հավաքածուն: Աշակերտները քննում են նյութը բարձրացնում ուսումնասիրության ենթակա հարցերը և թեման բաժանում են ենթաթեմաների[9]:

---

[8] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, «Զանգակ» հրատ., Եր., 2015, էջ 232:
[9] Մ.Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան: Փուլային ուսուցման եղանակ: Եր., 2014, էջ 104

Դասի **իմաստավորման փուլում** դասարանը բաժանեցինք 4-5 հոգանոց խմբերի, յուրաքանչյուր խմբին տվեցինք մեկական քարտ, որում առանձնացված էր բնագրից մի հատված: Սովորողները պետք է ուսումնասիրեին բնագիրը և առանձնացնեին գոյականները՝ դրանք դասավորելով «Т-աձև աղյուսակ»-ի համապատասխան սյունակներում: Տրված աշխատանքն ավարտելուց հետո, աշակերտերին առաջարկվեց շարունակել իրենց ուսումնասիրությունը և պարզել, թե տրված բնագրում ավելի շատ գոյականների ո՞ր խումբն է շատ կիրառվել: Աշխատանքների ավարտին յուրաքանչյուր խումբ ներկայացրեց իր կատարած աշխատանքը, ապա քննարկեցին և համեմատեցին միմյանց կատարած հետազոտության արդյունքները:

«Խմբային հետազոտության» մեթոդը մեր կարծիքով շատ արդյունավետ է կիրառել ուսումնական զանազան խնդիրներ լուծելու նպատակով, քանի որ այն ուսուցման գործընթացը դարձնում է ավելի հետաքրքիր և սովորողները միասին աշխատելով՝ կարողանում են հասնել որոշակի արդյունքների:

Տարրական դասարաններում ամենից հաճախակի կիրառվում է նաև «**Т-աձև աղյուսակը**»: Այն օգտագործվում է միևնույն հասկացության խնդրի երկու կողմերը համեմատելու համար, այն շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխաններ կամ համադրություն/հակադրություն արտահայտող արձագանքների կիրառման համար[10]:

«Т-աձև աղյուսակը» կարելի է կիրառել ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրության ժամանակ:

Այսպես, «Т-աձև աղյուսակը» կիրառեցինք երրորդ դասարանում «***Խոզն ու ագռավը***» ստեղծագործության ուսումնասիրման ժամանակ: Դասի նպատակներից մեկը *գոյականի եզակի և հոգնակի թվի* ուսումնասիրությունն էր: Լեզվական նյութի ուսումնասիրությունը կատարեցինք հետևյալ եղանակով. *դասի իմաստավորման փուլում* աշակերտներին բաժանեցինք քարտեր, որոնց վրա պատկերված էին եզակի և հոգնակի թվով գոյականներ և հանձնարարեցինք դրանք փակցնել գրատախտակին գծված աղյուսակի համապատասխան սյունակում:

[10] Մ.Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղաջյան: Փուլային ուսուցման եղանակ: Եր., 2014, էջ 69:

Նախապատրաստական փուլում նախ հարցերի օգնությամբ քննարկեցինք առաջադրանքը և կատարման կարգը: Առաջադրանքները կատարելով՝ աշակերտները վերհիշում են առարկա ցույց տվող բառերը, ինչպես նաև սովորում են գոյականի թիվը, դրանց անվանումները՝ եզակի և հոգնակի, գաղափար է տրվում նաև հոգնակի թվի վերջավորությունների (-եր, -ներ) մասին:

Առաջադրանքը կատարելուց հետո սովորողները գալիս են հետևյալ եզրահանգումներին.

- գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի,
- գոյականի եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա, իսկ հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի առարկաներ:

Մեթոդական հնարի ընտրությունը այնքանով էր արդյունավետ լեզվական նյութի ուսումնասիման ընթացքում, որ աշակերտները եզակի և հոգնակի գոյականները գրելով համապատասխան սյունակներում, կարողացան ակնառու տեսնել դրանք նմանություններն ու տարբերությունները, համեմատել դրանք, ինչպես նաև վերլուծել հոգնակի գոյականների վերջավորությունները և դրանց տարբերությունները:

Երրորդ «ա» դասարանում **«Ճայը և սագը»** ստեղծագործության ուսուցման ժամանակ սովորողներն ամրապնդում են նաև իրենց ունեցած գիտելիքները *հատուկ և հասարակ գոյականների* մասին: Այդ լեզվական նյութի ուսումնասիրման նպատակով դասի *իմաստավորման փուլում* կիրառեցինք **«Խճանկար» մեթոդը**:

Սովորողները բաժանվեցին 4 խմբի, յուրաքանչյուր խմբում՝ 5 մասնակից: Աշակերտներից ամեն մեկին բաժանեցինք տարբեր գույների քարտեր, որոնց վրա գրված էին հատուկ և հասարակ անունների վերաբերյալ նյութ (տեղեկություն) ու փոքրիկ առաջադրանք: Սկզբում աշակերտներից յուրաքանչյուրը ծանոթացավ իր քարտի բովանդակությանը, այնուհետև սովորողները կարդացին ու կատարեցին առաջադրանքները, որից հետո նույն քարտեր ունեցող աշակերտները միացան և միասին քննարկեցին իրենց քարտերի բովանդակությունը և միասին համեմատեցին կատարած առաջադրանքները: Այնուհետև խմբերը վերամիավորվեցին, յուրաքանչյուր աշակերտ իր քարտի բովանդակությունը սովորեցրեց խմբի մյուս անդամներին:

Խմբային աշխատանքը ավարտելուց հետո բանավոր քննարկում իրականացրինք, լսեցինք յուրաքանչյուր խմբի պատասխանը և աշակերտների հետ միասին լրացրինք «**Հասկացությունների աղյուսակը**»:

Դասի *իմաստավորման փուլում* **«Խճանկար» մեթոդի** կիրառությունը մեզ հնարավորություն ընձեռեց աշակերտներին ներգրավել ուսումնական գործունեության մեջ. սովորողները հանդես եկան ինչպես սովորողի, այնպես էլ սովորեցնողի դերում:

«Դերային խաղ»: Դերային խաղը հիմնվում է իրավիճակում առկա հիմնախնդրի լուծման ժամանակ մասնակիցների ակտիվ փոխազդեցության վրա: Այս մեթոդի կիրառմամբ պարապմունքները կրում են ակտիվ և հետաքրքրաշարժ բնույթ:

«Դերային խաղը» կիրառեցինք ***«Մխիթար Հերացին ու փակառագործը»*** ավանդության ուսուցման ժամանակ դասի *իմաստավորման փուլում*:

«Դերային խաղի» կիրառման նպատակն էր *բայ խոսքի մասի ուսումնասիրումը*: Աշակերտները զույգերով կամ անհատական դերայի խաղի օգնությամբ ցույց տվեցին գործողություն ցույց տվող բառեր, իսկ մյուսները գուշակեցին դրանք, որից հետո գործողություն ցույց տվող բառերը և այդ գործողության հետ կապված գոյականները գրվեցին գրատախտակին գծված «*T-աձև աղյուսակի*» համապատասխան սյունակում:

«Փոխներգործուն գրառումների համակարգ (ՓԳՀ)», «Խաթարված հերթականություն»

Երրորդ դասարանում **«*Քսակը*»** ստեղծագործության ուսուցման ժամանակ աշակերտները ուսումնասիրում են նաև օժանդակ բայերը:

Լեզվական նյութի ուսումնասիրության ժամանակ *դասի իմաստավորման փուլում* կիրառեցինք **«*Փոխներգործուն գրառումների համակարգ*»** մեթոդը, որը բնագրի հետ աշխատելու համար շատ արդյունավետ մեթոդ է:

Սովորողներին բաժանեցինք քարտեր, որոնց վրա գրված էին լեզվական գիտելիքին վերաբերող սահմանումներ, ապա հանձնարարեցինք կարդալ և նշումներ կատարել թերթիկների վրա:

Քարտի նմուշ-օրինակը՝

	✓ Հաստատում է իմ իմացածը:	+ Նոր տեղեկատվություն է:
1. Գործողություն ցույց տվող բառերը կոչվում են **բայ**: 2. Բայերը պատասխանում են **ի՞նչ է անում, ի՞նչ է լինում** հարցերին: 3. Բայերին օգնող, օժանդակող բառերը (եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին) կոչվում են **օժանդակ բայեր**:		

Նշումներ կատարելուց հետո սովորողները բաժանվեցին երկու խմբի և միասին քննարկեցին գրված տեղեկատվությունը: Այնուհետև արդեն բարձրաձայն քննարկվեց սովորողների համար նոր տեղեկատվությունը, և ամրապնդման համար կիրառեցինք **«Խաթարված հերթականություն»** մեթոդական հնարը՝ շարունակելով ստեղծված խմբերով աշխատանքը, յուրաքանչյուր խմբին տրվեցինք ծրարներ, որոնց մեջ գրված էին նախադասություններ՝ բաժանված տարբեր մասերի, սակայն բացակայում էին օժանդակ բայերը: Աշակերտները վերականգնեցին բառերի խաթարված հերթականությունը և տեսան, որ նախադասություններում բացակայում են **էր** և **է** բառերը:



Սովորողները եկան այն եզրահանգման, որ առանց այդ բառերի նախադասությունը լիարժեք չի լինում:

Օժանակ բայերի ուսումնասիրման նպատակով մեր կողմից «*Փոխներգործուն գրառումների համակարգ*» մեթոդի կիրառությունն արդյունավետ էր, քանի որ այն հնարավորություն ընձեռեց աշակերտներին կարդալու ընթացքում ուշադիր լինել, միանգամից ընկալել, թե տրված նյութի բովանդակությունը որքանով է իրենց ծանոթ, և նշել իրենց համար նոր տեղեկատվությունը՝ փորձելով կարդալու ընթացքում այն ինքնուրույն հասկանալ:

«**Աշխատանք փոքր խմբերով**» ուսուցման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս դասընկերների հետ փոխանակել իրենց գիտելիքներն ու փորձը, համատեղ լուծել տարբեր ուսումնական խնդիրներ:

Երրորդ դասարանում **«*Կառլսոնը, որն ապրում էր տանիքում*»** ստեղծագործության ուսումասիրման ժամանակ աշակերտները սովորում են, որ հատկանիշ ցույց տվող բառերին անվանում ենք ածականներ:

Ածական խոսքի մասի ուսումնասիրության ժամանակ՝ դասի *իմաստավորման փուլում,* կիրառեցինք «**Աշխատանք փոքր խմբերով**» մեթոդը: Այս մեթոդը նպաստեց դասարանում փոխգործուն մթնոլորտ ստեղծելուն:

Դասարանը բաժանեցինք 4 խմբի, յուրաքանչյուր խմբին տվեցինք քարտեր, որոնց վրա գրված էին հատկանիշ ցույց տվող բառեր, ապա հանձնարարեցինք տրված հատկանիշ ցույց տվող բառերը խմբավորել երկու սյունակներում.այն հատկանիշները, որոնք բնութագրում էին ստեղծագործության հերոսին գրել աջ սյունակում, իսկ մյուս հատկանիշ ցույց տվող բառերը գրել ձախ սյունակում: Այնուհետև հերթականությամբ կարդացին բառերը և տվեցին դրանց համապատասխան հարցերը, օրինակ՝ բարի-ինչպիսի՞ և այլն: Ապա բացատրեցինք, որ հատկանիշ ցույց տվող բոլոր բառերը այսուհետև կանվանենք **ածականներ**:

Վերջում աշակերտները եկան այն եզրակացության, որ հատկանիշ ցույց տվող բառը կոչվում է **ածական**, որը պատասխանում է **ինչպիսի՞** և **ո՞ր** հարցերին:

«**Աշխատանք փոքր խմբերով**» մեթոդն աշակերտներին հնարավորություն տվեց աշխատել խմբերով, ակտիվ համագործակցել խմբի մյուս անդամների հետ:

Դասի ավարտին՝ *կշռադատման փուլում*, լեզվական նյութի ամրապնդման նպատակով կիրառեցինք **«Քառաբաժան»** մեթոդական հնարը, որի հարցերը վերաբերում էին ածական խոսքի մասին, ինչպես նաև բնագրի բովանդակությանը:

1. Ինչպիսի՞ն էր Կառլսոնը:	2. Քո բառերով բացատրիր, թե ի՞նչ է ցույց տալիս ածականը:
3. Բնագիրից գտի՛ր և գրի՛ր տրված գոյականներին համապատասխան հատկանիշ ցույց տվող բառեր. **ընտանիք, էակ, մարդուկ, երեկո**	4. Այլ կերպ ինչպե՞ս կբնութագրես Կառլսոնին:

Դասը պլանավորելիս **«Քառաբաժան»** մեթոդական հնարի ընտրությունը այնքանով էր արդյունավետ, որ մեզ հնարավորություն տվեց պարզել, թե

աշակերտները որքանով են յուրացրել բնագրի բովանդակությունը և ածական խոսքի մասի նշանակությունը իրենց խոսքում:

2. 3. Ուսումնասիրման արդյունքների վերլուծություն և ընդհանրացում

Այսպիսով, ինչպես արդեն իմացանք, տարրական դասարաններում մայրենիի դասաժամերին իրականացվում է նաև ձևաբանական գիտելիքների ուսումնասիրում:

Տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ կիրառվում են տարբեր մեթոդներ ու մեթոդական հնարներ: Հետևաբար առաջին հերթին փորձեցինք պարզել, թե ներկայիս դպրոցներում ինչ եղանակներով է իրականացվում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը:

Այդ նպատակով՝ դիտումներ անցկացրինք Մ. Գորգիսյանի անվան հ. 158 հիմն. դպրոցում: Զրուցեցինք տարբեր դասարանի դասվարների հետ և փորձեցինք պարզել, թե նրանք որքանով են կարևորում տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը և թե ինչ մեթոդներ ու հնարներ են կիրառում այդ գիտելիքների ուսումնասիրման ժամանակ: Հարցմանը մասակցեցին թվով 15 դասվարներ և ստացանք հետևյալ արդյունքները:

Տրամագիր 1. Ձևաբանական գիտելիքների կարևորությունը տարրական



Հարցմանը մասնակցած դասվարների 40%-ը կարևորում է ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը տարրական դասարաններում, 36%-ը մասամբ է կարևորում, իսկ մնացած 24%-ը ընտրել է երրորդ պատասխանը, նշելով, որ տարրական դասարաններում ձևաբանական տարրական գիտելիքների

ուսումնասիրումը պետք է իրականացնել այնքանով, որքանով որ այն կնպաստի սովորողների գրավոր և բանավոր խոսքի զարգացմանը:

Երկրորդ հարցը վերաբերում էր ձևաբանական գիտելիքների ուսումնասիրության ժամանակ կիրառվող մեթոդներին:

Դասվարների 40%-ը նշել էր երկրորդ տարբերակը, իսկ 60%-ը՝ երրորդը, գտնելով, որ ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրումը կարելի է իրականացնել և՛ ավանդական, և՛ փոխներգործուն հնարների կիրառմամբ:

Այնուհետև ուսումնասիրեցինք մայրենիի առարկայական չափորոշիչը, ծրագիրը և դասագրքերը պարզելու համար, թե որքանով են ձևաբանական գիտելիքները արտացոլված դրանցում :

Հաջորդիվ ուսումնասիրեցինք նորագույն մեթոդները, դրանց առավելությունները և կիրառությունը ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ:

Պլանավորեցինք և փորձնական դասեր անցկացրինք երրորդ դասարանում, որտեղ կիրառեցինք փոխներգործուն մեթոդական հնարներ, ուսումնական տարբեր խաղեր, խմբային աշխատանքներ, անհատական աշխատանքներ:

Թեմաների ուսումնասիրման ավարտին պարզելու համար, թե ժամանակակից, փոխներգործուն հնարներով անցկացված դասերը որքանով են նպաստել աշակերտների կողմից ձևաբանական տարրական գիտելիքների յուրացմանը, կիրառեցինք անհատական թերթիկներով աշխատանք, որի առաջադրանքները վերաբերում էին գոյական, բայ, ածական թեմաներին: Գրավոր աշխատանքին մասնակցեց երրորդ դասարանի 20 աշակերտ:

Տրամագիր 2 . Սովորողների կողմից ձևաբանական տարրական գիտելիքների ստուգման արդյունքները:



Պարզ դարձավ, որ սովորողների 65%-ը գերազանց արդյունք էր ցույց տվել և անսխալ կատարել էր ինքնուրույն աշխատանքը, իսկ մյուս 35%-ի մոտ առկա էին որոշակի սխալներ, նշենք նաև, որ կատարված սխալները կրկնվում էին: 25%-ի մոտ առկա էին օժանդակ բայերի ճիշտ կիրառման սխալներ, որը մեր կարծիքով պայմանավորված է նյութի դժվար ընկալման պատճառով, իսկ մնացած 10%-ի մոտ առկա էին ավելի շատ անուշադրության սխալներ և ջնջումներ:

Ներկայումս ուսումնական գործընթացը պլանավորելիս ավելի մեծ տեղ է հատկացվում փոխներգործուն մեթոդական հնարների կիրառմանը: Նորագույն մեթոդները ուսուցման գործընթացը դարձնում են ավելի հետաքրքիր և սովորողները հնարավորություն են ստանում ինչպես սովորել, այնպես էլ սովորեցնել, սակայն չենք կարող նշել, որ հնարավոր է ամբողջապես ժխտել ավանդական մեթոդների կիրառության կարևորությունը ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրման գործընթացում: Ձևաբանական տարրական գիտելիքների հիմքերը դրվում են տարրական դասարաններում, ուստի շատ կարևոր է, որ սովորողներն իրենց ձեռք բերած գիտելիքները կարողանան ճիշտ կիրառել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ուսումնասիրելով լեզվական և մեթոդական գրականություն՝ եկանք այն եզրահանգման, որ ձևաբանական գիտելիքների ուսումնասիրությունը մշտապես եղել է լեզվաբանների և մեթոդիստների ուշադրության կենտրոնում, ովքեր գրքեր են հրատարակել ձևաբանության վերաբերյալ, ինչպես նաև բազմաթիվ տեսակնետներ են ներկայացրել, թե ինչպես կարելի է տարրական դասարաններում կազմակերպել դրանց ուսումնասիրությունը:
2. Համաձայն մայրենիի առարկայական չափորոշչի և ծրագրի տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքներն ուսումնասիրվում են բոլոր դասարաններում: Ուսումասիրությունն իրականացվում է երկու փուլով՝ ձևաբանական նախագիտելիքների ուսումնասիրություն և ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրություն: Ձևաբանական գիտելիքների ուսումնասիրության համար մայրենիի դասագրքում ներառված են առաջադրանքներ, որոնք որոշ չափով նպաստում են ուսումնասիրության խնդիրների լուծմանը:
3. Դիտարկելով տարրական դասարաններում ձևաբանական գիտելիքների ուսումասիրման հաջորդայնությունը՝ եկանք այն եզրահանգման, որ տվյալ հաջորդականության ընտրությունը (գոյական, բայ, ածական, թվական) պատահական չէ և պայմանավորված է խոսքում նրանց գործածության հաճախականությամբ, որը ունի ուսումնամեթոդական հիմնավորումներ:
4. Բացահայտեցինք, որ մայրենիի դասաժամերին՝ ԽԻԿ համակարգի տարբեր փուլերում, ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրության գործընթացում տարաբնույթ փոխներգործուն մեթոդական հնարներ, հետաքրքրաշարժ ուսումնական խաղերի և մեթոդական հնարների կիրառությունը լեզվական նյութի ուսումնասիրությունն ու յուրացումը դարձնում են ավելի արդյունավետ և հետաքրքրաշարժ: Դրանց թվին են պարկանում՝ «Տ-աձև աղյուսակը», «Փոքր խմբերով աշխատանքը», «Մ-աձև աղյուսակը», «Քառաբաժանը», «Մտագրոհը», «Խճանկարը», «Հասկացությունների աղյուսոակը» և այլ բազմազան մեթոդներ:

5. Ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման նպատակով մեր կողմից պլանավորված և ժամանակակից մեթոդներով անցկացրած փորձնական դասերը լեզվական գիտելիքների ուսումնասիրումը դարձնում են ավելի մատչելի և հետաքրքրաշարժ: Սովողները գործնական ճանապարհով ձեռք են բերում գիտելիքներ, սովորում են դրանք խոսքում ճիշտ կիրառել, ինչպես նաև անկաշկանդ հաղորդակցվել միմյանց հետ, կարողանում են խմբում միասին աշխատել, հանդես գալ ինչպես սովորողի, այնպես էլ սովորեցնողի դերում: Իրականացրած աշխատանքներից հետո, կարող ենք նշել, որ ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ տարաբնույթ մեթոդների կիրառությունը նպաստում է ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը և լեզվական գիտելիքների ակտիվ յուրացմանը: Փորձարարական դասեր անցկացնելով եկանք այն համոզման, որ շատ կարևոր է դասին լավ նախապատրաստվելը, մեթոդների ճիշտ ու նպատակային ընտրությունը, սովորողների պատրաստվածության մակարդակը, ինչպես նաև դասաժամի ճիշտ բաշխվածությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս. Գ., Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1969, 439 էջ:
2. Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ, Մանկավարժություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար: Եր.: Արտագերս, 2017, 360 էջ:
3. Ալեքսանյան Լ., Ուսուցման փոխներգործուն (ինտերակտիվ) մեթոդների տեսությունն ու պրակտիկան, Եր.: Երևանի հանրապետական հոգեբանական կենտրոն, 2004, 130 էջ:
4. Բալայան Ա., 200 խաղ, Եր.: «Զանգակ» հրատ., 2017, 117 էջ:
5. Գյուլամիրյան Ջ.Հ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., «Զանգակ» հրատ., 2015, 315 էջ:
6. Գյուլամիրյան Ջ.Հ., Խաղալով սովորենք, Եր., «Զանգակ» հրատ., 2009, 80 էջ:
7. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Բալայան Ա., Ինչպես պլանավորել մայրենիի դասը: 3-րդ դասարան, Եր.: «Զանգակ» հրատ., 2017, 512 էջ:
8. Հայոց լեզու, գրականություն, Հանրակրթական հիմնական դպրոցի առարկայական ծրագիր և չափորոշիչ(1-9-րդ դասարան): Եր.,Անտարես, 81 էջ:
9. Միրումյան Մ., Հայոց լեզու, տեսական և գործնական դասընթաց: Հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար: Եր., «Զանգակ», 2012, 344 էջ:
10. Տեր-Գրիգորյան Ա. Ե.,Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., Լույս, 1980, 564 էջ:
11. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի-3»: Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Եր., «Մակմիլան-Արմենիա», 2009, 160 էջ:
12. Սարգսյան Վ., Այբբենարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի համար, Եր., Մանմար, 2013, 156 էջ:
13. Սարգսյան Վ., Մայրենի-1: Հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի դասագիրք: Եր., 2015, 64 էջ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հարցաթերթիկ

1. Որքանո՞վ եք կարևորում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը տարրական դասարաններում:

ա) շատ կարևոր է գ) այնքան էլ կարևոր չէ

բ) մասամբ դ) այլ պատասխան

2. Ի՞նչ մեթոդներ և հնարներ եք կիրառում ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ:

ա) ավանդական մեթոդներ

բ) փոխներգործուն մեթոդկան հնարներ

գ) ավանդական և փոխներգործուն մեթոդական հնարներ

3. Ձեր կարծիքով ինչպիսի՞ մեթոդների և մեթոդական հնարների կիրառմամբ կարելի է իրականացնել ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումը:

_____

_____

_____

_____ :

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հարցեր և առաջադրանքներ

(Առարկա ցույց տվող բառեր)

- Ո՞ր հարցերին են պատասխանում առարկա ցույց տվող բառերը:
- Տրված առարկա ցույց տվող բառերը խմբավորեք ըստ հարցերի՝ ո՞վ/ի՞նչ:

(արև, մարդ, ամպ, գարուն, շուն, եղևնի, ձայն...)

- Թվարկե՛ք տրված բառերի հոգնակին:

(տետր, ծուկ, մարդ, սեղան, նկար, կապիկ, կին...)

- Տրված բառերը խմբավորե՛ք և գրե՛ք համապատասպան սյունակներում: (տանձ, լոլիկ, կատու, վագր, խնձոր, շուշան, վարդ, վարունգ, սոխ, կաղամբ, կապիկ, զանգակ, մանուշակ, արքայախնձոր...)

Մրգեր	Բանջարեղեններ	կենդանիներ	ծաղիկներ

- Ինչո՞վ են իրարից տարբերվում հատուկ և հասարակ անունները:
- Ի՞նչ գրություն ունեն հատուկ անունները: Թվարկեք հատուկ և հասարակ անուններ:

Հարցեր և առաջադրանքներ

(Հատկանիշ ցույց տվող բառեր)



- Ո՞ր հարցին են պատասխանում հատկանիշ ցույց տվող բառերը:
- Թվարկե՛ք *ինչպիսի՞* հարցին պատասխանող բառեր:
- Ինչպի՞ն են պատկերված առարկաները:

- Տրված հատկանիշ ցույց տվող բառերը ո՞ր առարկաների հետ կարող են ընկերներ լինել:

հաստափոր	ընկեր
փափուկ	մեղու
քաղցր	գիրք
աշխատասեր	բարձ
հավատարիմ	շոկոլադ

Հարցեր և առաջադրանքներ

(Գործողություն ցույց տվող բառեր)

- Ո՞ր հարցերին են պատասխանում գործողություն ցույց տվող բառերը:
- Նայելով նկարներին՝ ասացե՛ք, թե ի՞նչ գործողություններ են պատկերված:

Ի՞նչ է անում: Ի՞նչ է անում տղան:

- Հարցերի փոխարեն գրե՛ք գործողություն ցույց թվող բառեր:

Երգիչը (ի՞նչ է անում):

Երեխան (ի՞նչ արեց):

Ծաղիկը (ի՞նչ է անում):

Արևը (ի՞նչ արեց):

Գիտունը (ի՞նչ կանի):

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Դասի պլան

Դասարան՝ 3-րդ

Առարկա՝ Մայրենի

Դասագիրքը՝ «Մայրենի 3», հեղինակներ՝ Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Ե. Ջիլավյան:

Թեմատիկ խումբ՝ «Ժողովուրդն իմաստուն է»

Դասի թեմա՝ Մխիթար Գոշ, «Ճայը և սագը»: Հատուկ և հասարան անուններ:

Դասի տեսակը՝ Նոր նյութի հաղորդում

Դասը վարում ենք ԽԻԿ համակարգով

Ուսումնասիրվող ստեղծագործության գաղափարը՝ «Իմ լեզվով խոսող օտարն ավելի լավ է, քան իմ լեզուն չիմացող ազգակիցը»:

Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ, հնարներ՝ «Խճանկար», «Բառ-բանալի», «Հասկացությունների աղյուսակ», «Խաթարված հերթականություն»:

Անհրաժեշտ նյութեր՝

- Սագի և ճայի նկար:
- Առաջադրանքներով քարտեր (հատուկ և հասարակ անունների ուսումնասիրման համար):
- Թղթերի վրա գրված բառեր («Խաթարված հերթականություն» համար):

Դասի նպատակներն ու խնդրիները՝

1. **Ուսումնական՝**
    - Կապակցված խոսք կառուցելու, կարծիքներն ու մտքերն ազատ արտահայտելու կարողությունների ձևավորում:
    - Հասկանալով և ճիշտ կարդալու կարողությունների ձևավորում:
    - Առակի հիմնական գաղափարը հասկանալու և ենթատեքստը վերհանելու կարողությունների ձևավորում:

- Ամրապնդեպ հատուկ և հասարակ անունների մասին ունեցած գիտելիքներն ու հատուկ անունների ուղղագրությունը:

2. **Դաստիարակչական՝**
   - Սերմանել սեր սեփական լեզվի, հայրենիքի նկատմամբ:
3. **Զարգացնող՝**

- Զարգացնել սովորողների ուշադրությունը և պատասխանատվության զգացումը:

Դասի ընթացքը՝

Կազմակերպական մաս:

Խթանման փուլ:

Գրատախտակին փակցրինք ճայի և սագի նկարները և աշակերտներին առաջարկեցինք ազատ և անկաշկանդ արտահայտել իրենց մտքերը թռչունների մասին:

- Ինչպե՞ս կբնութագրեք սագին և ճային:
- Ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք նկատում նրանց միջև:

- Այնուհետև կրառեցինք **«Բառ-բանալի»** մեթոդական հնարը:

  Բանալի բառեր՝ *ճայ, սագ, սև, արհամարհել, սպիտակ, լեզու, չցանկանալ, նմանվել:*

- Ձեր կարծիքով ինչպիսի՞ն կարող է լինել առակի բովանդակությունը՝ ըստ գրատախտակին գրված բառերի:

Իմաստավորման փուլ:

- Բնագրի լուռ ընթերցում աշակերտների կողմից:
- Լուռ ընթերցեք բնագիրը և ասացեք, թե ինչի՞ համար էին թռչունները վիճում և ո՞րն էր նրանց տարբերությունը:

- Բնագրի բարձրաձայն ընթերցում սովորողների կողմից:
- Ինչո՞վ էր անհանգստացած ճայը և ի՞նչ խնդրեց Սագին:
- Ճայը կարողացա՞վ կատարել Սագի խորհուրդը:
- Ինչո՞ւ էր ճայը կարևորում լեզուն, դուք ինչպե՞ս կվարվեիք:

- Բնագրի հատվածաբար ընթերցում աշակերտների կողմից, ուղղագրական և անծանոթ բառերի շուրջ կատարվող աշխատանք:
- Կիրառեցինք **«Խճանկար» մեթոդը**:

Բնագրի ընթերցումից հետո սովորողներին բաժանեցինք 5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խմբի անդամներին ըստ գույների բաժանեցինք քարտեր, որոնց բովանդակությունը վերաբերում էր լեզվական նյութին՝ *հատուկ և հասարակ անուններին:* Աշխատանքը սկսելուց առաջ սովորողներին բացատրեցինք աշխատանքի կատարման կարգը և խմբային աշխատանք կատրելու պահանջները:

Քարտերի բովանդակությունը:

1. Միևնույն տեսակի բոլոր առարկաներին տրվող ընդհանուր անունը կոչվում է հասարակ անուն, օրինակ՝ աղջիկ, քաղաք, ծաղիկ և այլն: **Գրե՛լ մի քանի հասարակ գոյականներ և դրանցից 2-ը գործածել նախադասության մեջ**:
2. Միևնույն տեսակի առարկաներից յուրաքանչյուրին տրվող առանձին անունը կոչվում է հատուկ անուն, օրինակ՝ Տաթև, Սևան, Էջմիածին և այլն: **Գրե՛լ մի քանի հատուկ գոյականներ և դրանից 2-ը գործածել նախադասության մեջ:**
3. Հատուկ անունները գրվում են մեծատառով, իսկ հասարակ անունները գրվում են փոքրատառով: **Տրված տեքստից դուրս գրել հատուկ և հասարակ անունները:** *Արաքս գետը հայերի համար եղել է սնող, կյանք պարգևող սիրելի գետ: Դրա համար էլ ժողովուրդը գետը կոչել է Մայր Արաքս: Արաքսի մեջ են լցվում Հրազդան, Ազատ, Ողջի և Որոտան գետերը: Հնում Արաքսը լցվում էր Կասպից ծովը,իսկ այսօր միանում է Քուռ գետին:*
4. Հատուկ անունները կարող են դառնալ հասարակ, իսկ հասարակ անունները կարող են դառնալ հատուկ, օրինակ՝ անդրանիկ-առաջնեկ, ավագ/ Անդրանիկ- անձնանուն կամ շուշան-ծաղկիկ/ Շուշան-անձնանուն: **Առանձնացրե՛ք այն հասարակ գոյականները, որոնք միաժամանակ հանդես են գալիս որպես հատուկ անուններ:** ծաղիկ, մանուկ, մարգարիտ, մեխակ, թագուհի, շուշան, մարտիկ, ռազմիկ, վրեժ, կորյուն, ավան, իշխան, անդրանիկ:

5. **Շարունակի՛ր.** գյուղ – Օշական, Գառնի……: սար - Արագած, ……..:

գետ – Արաքս, Հրազդան, ……..: մարդ – Աշոտ, Սոնա, …….

լիճ – Սևան, Վանա, ……: քաղաք – Երևան, ……:

Ձախ կողմում գրված են հասարակ անունները, իսկ աջ կողմում գրվածները հատուկ անուններն են:

Ավարտին ամփոփեցինք խմբերի կատարած աշխատանքի արդյունքները: Այնուհետև գրատախտակին գծեցինք և լրացրեցինք **«Հասկացությունների աղյուսակը»,** որի օգնությամբ ամբողջացրինք աշակերտների ձեռք բերած գիտելիքները: Աշակերտները գծապատկերին նայելով վերապատմեցին բոլոր խմբերի ենթաթեմաները:

Կշռադատման փուլ:

- Հարցերի օգնությամբ ամփոփեցինք բնագրի բովանդակությունը:
- Դասի ավարտին կիրառեցինք **«Խաթարված հերթականություն»** մեթոդական հնարը, որի օգնությամբ էլ վեր հանեցինք բնագրի բուն գաղափարը և ենթատեքստը:
- Գրատախտակին նախապես փակցրել էինք առակի հիմնական գաղափարը բնութագրող ասացվածքը, և սովորողներին առաջարկել վերականգնել այն: Ավարտին քննարկեցինք ասացվածքի հիմնական իմաստը և առաջարկեցինք թվարկել այլ ասացվածքներ լեզվի մասին:

«Իմ լեզվով խոսող օտարն ավելի լավ է, քան իմ լեզուն չիմացող ազգակիցը»: